Այնուհետև հետզհետէ իմ տրամադրութեան տակ դրուեցան այս երեք նոր փոփոխակները, որ տպագրուեցան Արարատի 1909 թուականի համարներում[1]։

14. Մեր առաջինը «Թլէօլ Դաւթի խէքեաթ» (էջ 1—35). որ պատմել է Հայուձորայ *անկշտանցի Կազարեան Թառօն (§ 150) առացել ենք Գիւտ քահանայ Աղանեանից. և կը նշանակենք № 14, ԳԿԱ. ՀՋԲ։*

15. Մեր երկրորդը «Ջօջանց տուն» (էջ 37—101). «Ասած է Մոկաց *Հաղին գիւղացի Թումա Պետրոսեանը» (էջ 37). մեզ յանձնել է հանգուցեալ Սարգիս Հայկունին=15, ՀԿԱ, ՄԲ։*

16. Մեր երրորդը, «Ջօջանց տուն կամ Սասմայ ծռեր» (էջ 103—123). գրի է առել Յ. Ասչեանը Գաւաշու բարբառով, որ տուել է մեզ հրատարակելու=16, ԱԿԱ. ԳԾԲ։

17. Այս երեք նոր փոփոխակներից առաջինի մի մասը դեռ նոր էր լոյս տեսել, երբ միաժամանակ Վիեննայի Մխիթարեանց Հանդէս Ամսօրեայ թերթում սկսուեց հրատարակուել տաճկահայ յայտնի բանահաւաք Տիգրան Չթունու «Սասմանց տուն, հայ ժողովրդական դիւցազնավէպի նոր վարիանտ, Կարկառ բարբառով»[2], *որի տպագրութիւնը տակաւին չէ վերջացել.=№ 17, ՉՎՄ, ԿԿԲ։ Ահա և ճիւղագրութիւնը.*

№ 14, ԳԿԱ, ՀՋԲ.

Աստղիկ Սասնայ քաղաքի թագուոր[1]

Սուսան Խաթուն[1] *= Բեռչանց թագաւորի լաճ*[1].

Սանասար[2] *= Սուռաթ խաթուն, Բաջանց թագաւորի աղջիկ*[3] — *Պաղտասար*[2].

Մս. թա- գուհի[5] *= Ծռչիկ Մհ.*[4] *= Սինամ*[4]*. Ջէն. Յով*[4]*. = Կիւլիզար*[4]*. Թառլան Վէգօ*[4] *= Ծիւռ Կիւլակ*[4]*.*

Մելիք[5]*. Տղա-Դաւիթ*[6] *= Խանտիւթ Կապտ Կողայ թգ. աղջիկ*[7]

Պզտիկ Մհէր[8]

1. Ա, § 2, 4։—2. Ա. § 4։—3. Ա, § 10, 14։—4. Բ, § 19։—5. Բ, § 20—21։—6. Գ, § 22։—7. § 113, 125։—8. ԺԲ, § 126։

---

1. Արարատ 1909. Մարտ էջ 1—16. Մայիս-Յունիս էջ 17—48, Յուլիս-Օգոստոս էջ 49—80. Սեպտեմբեր էջ 81—96 եւ Հոկտ.-Նոյեմբ. էջ 97—124.

2. Հանդէս Ամսօրեայ 1909. Թիւ 4 էջ 111—118. Թիւ 6 էջ 186—190. Թիւ 7 էջ 212—216 եւ Թիւ 9—10 էջ 274—279 (շարունակելի)։